**Արձանագրություն 8**

«ՀՀԿԳՆԷԱՃԱՊՁԲ-18/2» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով համակարգչային սարքավորումների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 12.12.18թ.
ժ.14:00

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց
Հանձնաժողովի անդամ՝ Ա. Խաչատրյան
Հ. Մուշեղյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

## 1. Արձանագրված անհամապատասխանությունները շտկելու և հայտը գնահատելու մասին

(Մ. Աղայանց)

1.1 «Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորումը հիմնավորող նոր փաստաթղթերը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հիմնավորելու նպատակով, 2018թ դեկտեմբերի 10-ին և 11-ին էլեկտրոնային փոստի միջոցով՝ լրացուցիչ տեղեկություններ և փաստաթղթեր:

1.2 Ուսումնասիրելով «Ինո Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը հանձնաժողովը արձանագրեց հետևյալը.

1.2.1 Հրավերի 2-րդ հավելվածով նախատեսված գրությունը համապատասխանեցվել է հրավերով սահմանված պահանջներին:

1.2.2 Հաշվի առնելով ԵՊՀ-ի կողմից տրված տեղեկանքը՝ ԵՊՀ-ի հետ 13.04.2017թ կնքված թիվ <<ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-17/27>> պայմանագիրը ընդունել որպես պատշաճ կատարված:

1.2.3 ԵՊՀ-ի հետ 13.04.2017թ կնքված թիվ <<ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-17/27>> պայմանագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն ներկայացված է բնօրինակից արտատպված տարբերակով:

1.2.4 <<Յուքոմ>> ԲԲԸ-ի հետ 31.08.2017թ կնքված մատակարարման պայմանագիրը ընդունել որպես պատշաճ կատարված:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

1.3 Հիմք ընդունելով 1.2 կետում արձանագրվածը հանձնաժողովը որոշեց հայտը գնահատել բավարար և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից /հիմք՝ հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները/:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

1.4 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ ըստ որի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որի ավարտից հետո, էլեկտրոնային աճուրդով գնումների կազմակերպման կարգին համապատասխան <<Ինո-Թեքնոլոջի>> ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

**Ընդունվել է որոշում՝ կողմ *3, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

Մ. Աղայանց /նախագահ/
Ա. Խաչատրյան
Հ. Մուշեղյան
Ա. Մարգարյան /քարտուղար/